ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ФОНД ВИНОДЕЛИЯ И ВИНОГРАДАРСТВА АРМЕНИИ
VINE AND WINE FOUNDATION OF ARMENIA

N 16/2021
12.04.2021թ.

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի Տնօրեն
Ն. Մուրադյանին
ք. Երևան, Մաշտոցի 54ա
Էլ. հասցե՝ alexandr.spy@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2021 թվականի մարտի 15-ին կնքված Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման թիվ ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է այգիների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6 800 000 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ և ըստ Պայմանագրով սահմանված վճարման ժամանակացույցով մարտ ամսվա համար պլանավորվող ծառայության մատուցման վճարը կազմում է 1 360 000 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 03 ապրիլի 2021 թվականին Ձեր կողմից մատուցված ծառայությունների մասով, ներկայացրել է բացասական եզրակացություն և 03.04.2021 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով Ձեզ է ծանուցվել այն ծառայությունների անվանումները, որոնք չեն մատուցվել կամ մատուցվել են թերություններով և համարվում են չկատարված:

Միաժամանակ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1 կետի 2.1.2 ենթակետի <<ա>> պարբերությամբ սահմանվել է անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ՝ 2 օրացուցային օր: Սակայն ոչ մի քայլ չեք ձեռնարկել, և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացրել եք անհիմն պատճառաբանություններ և ծառայության մատուցման համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ:

Վերոնշյալով պայամանավորված Կատարողը խախատել է նաև պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

5 M. Mkrtchyan str.,
0010, Yerevan, RA
Tel.:(+374) 60655885
info@vwfa.am

Մ. Մկրտչյան 5,
ՀՀ, 0010, ք. Երևան
Հեռ.:(+374) 60655885
info@vwfa.am

М.Мкртчяна 5
РА, 0010, Ереван
Тел.: (+374) 60655885
info@vwfa.am

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի <<ա>> և <<բ>> ենթակետերը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի ամբողջությամբ լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի մատուցված ծառայությունները չեն համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները: Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 09.04.2021 թվականին միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների մատուցման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում Պայմանագրի 5.2 կետով նախատեսված պայմանով <<Կոնվերսբանկ>> ՓԲԸ–ի կողմից Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի անվամբ բացված 1930058282670100 հաշվեհամարին փոխանցել՝ 34 000 (երեսունչորս հազար) ՀՀ դրամ գումար՝ որպես Պայմանագրի շրջանակներում հաշվարկված տուգանք և 6 800 (վեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 5.3 կետի համաձայն (Պայմանագրի չկատարված գումարի նկատմամբ):

Միաժամանակ՝ տեղեկացնում եմ, որ համաձայն Պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման տուժանքների մասին համաձայանգրերի 1.3 կետի՝ համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը կներկայացվեն Ձեր ընկերության սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու նպատակով և կնախաձեռնվի «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Հարգանքով՝
Գործադիր տնօրեն Հ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

5 M. Mkrtchyan str.,
0010, Yerevan, RA
Tel.:(+374) 60655885
info@vwfa.am

Մ. Մկրտչյան 5,
ՀՀ, 0010, ք. Երևան
Հեռ.:(+374) 60655885
info@vwfa.am

М.Мкртчяна 5
РА, 0010, Ереван
Тел.: (+374) 60655885
info@vwfa.am